

աս բոյսէն նոր օգտակար բան մը չէլ-
նարեն :

**Պարզաբու-ծառերուն համար նոր
պարարփութիւն :**

ՀԱՐԻՒՐ լիպրէ ջրին մէջ մէկ լի-
պրէ հասարակ սոսինձ եփէ, ու պա-
ղելէն ետև մէյմէկ քիչ տուր ան հին
կամ տկար ծառերուն որ քիչ պտուղ
կուտան - բայց այնպէս որ ջուրը ին-
չուան անոնց արմատին հասնի : Ի՞ս
գործողութիւնը տարին երկու ան-
գամ ընելու է :

Ոսպանացի Ճարտար երկրագործ-
ներէն մէկը փորձով կը հաստատէ,
թէ նաև նոր տնկած բոյսերու ալ-
շատ օգտակար է աս ջուրը :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԲԱՐՈՑ ԱԿԱՆ

Տար-ո՞ն Վէրմէ օրը :

Ի՞ս տարիս ալ կը լմբնայ . . . աս
տարիս ալ լմբնցաւ : Ո՞րչափ դիւրին
է բերնով լսելը, ո՞րչափ ծանր է սըր-
տով լսելը : Ժամանակին արագու-
թեանը նայելով՝ այնպէս մը կ'երենայ
թէ գիրք մը թղթատելը՝ Ճակատէն
ինչուան վախճանը հասնիլը որչափ ա-
տեն որ կը քշէ, տարւոյն շրջանն ալ
անկէ աւելի քշեր, և թէ տարի
տարուընէ շուտ կ'անցնի . կամ ան է
որ ժամանակը յօդնելու տեղ երթա-
լով աւելի կը վարժի թռչելու, կամ
ան է որ մարդուս տժգոհութիւնը
որ ունի կենաց կարծութեանը վրայ՝
հասակը առնելով կ'աւելնայ : Ի՞սանկ
մտածողը մէկ տարին՝ մէկ օրուան պէս
կը փոխէ : Բայց թէ որ յանկարծ մը-
տածելու ըլլայ՝ թէ աս տարիս աշ-
խարհքիս սկիզբէն՝ ի վեր վազած ժա-
մանակին ութը հազարերորդ մասն է,
ապշութիւն մը կը տիրէ մտքին, ու
ժամանակը առջինէն աւելի կարծ ե-

րենալով, իր մասունքը՝ այսինքն տա-
րիները կը սկսին երկայն երեսնալ՝ մէյ-
մէկ դարերու պէս, օրերն ալ մէյմէկ
տարիներու պէս . կը տեսնէ կը մտածէ
աշխարհքիս վրայ եղած անցած ան-
թիւ անհամար գործքերն ու գիւտե-
րը որ կը պատմուին այնչափ գրքերու
մէջ, որ 8000 տարին քառակա ասոնք
միայն կարդալու համար . կ'ասլի կը
զարմանայ թէ ան կարծ միջոցին մէջ
ինչպէս անցեր են այնչափ դիպուած-
ները, ու կը սկսի ըսելթէ ուրեմն որ
չափ մեծ շրջան է տարւոյ մը շրջանը,
կամ որչափ ընդարձակ միջոց է եղեր :

Ի՞ս անցուցած տարիս ալ արդեօք
այն զարմանալի տարիներէն մէկն էր :
Խնձի կ'երենայ թէ աս տարիս պա-
րապ նաւու մը կը նմանէր օր ժամա-
նակին եղերը նոր հասած ատենը՝ իբր
թէ նաւահանգստին բերանն էր . ու
քանի որ ալիքները չղելով կ'անցնէր,
աւելի բեռնաւորած՝ լրցուած՝ հասաւ
յաւիտենականութեն ովկիանոսը . . .
Վանի միլիոն մարդ հետը աշխարհք
բերաւ, ու քանի միլիոններ անդին ան-
ցուց : Վանի փոփոխութիւներ եղան իր
անցնելու ատենը ծովու ու ցամաքի
վրայ : Ի՞նչ փոփոխութիւններ եղան
մեր բարոյական և քաղաքական վի-
ճակին վրայ : Ի՞նչ նոր գիւտեր,
նոր կարծիքներ, նոր ժամբաններ, նոր
օգուտներ, նոր վտանգներ . քանի
նոր վարդապետութիւններ ու նոր մոլո-
րութիւններ ելան . ո՞րչափ նոր կար-
գեր, նոր սահմաններ, նոր ժառան-
գութիւններ : Վանիներ մեծցան,
քանիներ պղտիկցան . քանիներ ա-
ռաջ գնացին, քանիներ ետ մնացին .
ո՞րչափ մարդիկ իրենց հին փափաքին
հասան, ո՞րչափ մարդիկ ալ յուսահա-
տեցան : Ո՞րչափ նոր յիշատակարան-
ներ կանգնուեցան աշխարհիս վրայ, և
ո՞րչափ հիներ ջնջուեցան . քանի նոր
անուններ լսուեցան որ թերեւս միշտ
ալ պիտի մնան, ու քանի անուններ
մոռցուեցան :

Ո՞արդուս միտքն ալ՝ անցուցած տա-
րին ալ կ'ընդարձակուի այսպիսի մը-

տածմունքներով . ու չիկրնար մէկը
ըսել՝ թէ իրաւ ատ խաղերը աշխար-
հիս վրայ խաղցուեր են , բայց ես ան-
ծանօթ տեսնողի կամ չտեսնողի ու
չտեսնուղի մը պէս մնացի իմ տեղս .
տարին ուրիշ բան չըրաւ ինծի՝ բայց
եթէ ալիք մըն էր վրայէս անցաւ ,
բայլ մըն ալզիս առաջ տարաւ : Ան-
ատանկ չէ . քու չկարծած գործքերդ
ալ ատ տարւոյն վրայ գրուեցան . աշ-
խարհիս թատրոնին մէջ դուն ալդե-
րասան մը եղար . տարիդ անցաւ ,
բայց աս աշխարհիս երեսէն միայն
գնաց . իսկ անդին ուրիշ աշխարհի մը
մէջ քեզի կը սպասէ մէկ անգամ մըն
ալ երենալու՝ ինչպէս որ անցուցիր ,
ու քուկին ձեռքովդ դրած նշանները
ցուցընելու յաւիտենականութեն մէջ :
Այս մտածմունքով պէտք է որ խելք
ունեցողը , մանաւանդ քրիստոնեայ
մը՝ զգուշութեամբ ու ծանրութեամբ
մը նայի ան տարւոյն վրայ որ ահա
կ' անցնի կը ծածկուի , և ան տարւոյն
վրայ՝ որ ահա կ' երենայ կուգայ . ու
երբոր ասով սրտին վրայ կ' իջնայ մէկ
վախ մը կամ մէկ ուրախութիւն մը ,
դառնայ յուսով ու սիրով իր Արար-
ջն , ու ըսէ Աթուրմ գերմանացի ի-
մաստասիրին հետ .

“ Ավտէր , դու ես Աստուած ժա-
մանակի և Աստուած յաւիտենա-
կանութեան . քեզի կ' ուզեմ սրտանց
երգ մը երգել ուրախութեան , փա-
ռաբանութեան . քու անունդ կ' ու-
զեմ օրչնել ու փառաւորել : Ահա
աս տարիս ալիր շրջանը լմընցընելու
վրայ է . բայց իմ կենացս շրջանին
սկիզբը և շարունակութիւնը ուս-
կից է . — միայն քու գթութէդ ու
քու հայրական սիրոյդ խնամքէն է :
“ Դու տէր , դու անփոփոխ ես . դու
միայն էիր միշտ և ես և պիտի ըլ-

“ լասյաւիտեանս յաւիտենից : Վու
սէրդ ազգէ ազգ՝ դարէ դար կ' իջ-
նայ , և առաւոտէ առաւոտ քու
խնամքդ կընորոգուի : — Վու հայ.
“ բական խնամքդ առաջնորդեց ինծի
աս լմընցուցած տարւոյս մէջ . երբ-
որ սիրտս տրտմութեամբ ու հո-
գով կը մաշուէր , դու այցելութք
և օգնութք կը միսիթարէիր զիս .
“ հիմա ես զքեզ բոլոր սրտանց՝ բո-
լը հոգւով կը գովեմ ու կ' օրչնեմ ,
և նորէն կը յանձնեմ զիս քու ան-
սիալ և իմաստուն առաջնորդու-
թեանդ : — Բայց կ' աղաչեմ , ներէ
այն անթիւ յանցանացս որ ըրի քե-
զի դէմաս անցուցած տարւոյս մէջ .
նորէն տուր ինծի քու հայրական
օգնութիւնդ՝ քու միածնիդ ։ Ին-
սուսի շնորհօքը , որպէս զի ամէն
մէկ օրս՝ բոլոր իմ կեանքս քու փա-
ռացդ և հաճոյիցդ համար անցը-
նեմ : — Աշխարհքս կ' անցնի , իր
վայելցութիւններն ալ հետը . բայց
ես իմ երջանկութիւնս անոնց վրայ
չեմ դրած . իմ սիրտս աւելի մեծ
ու ազնիւ վայելքներու կը սպասէ .
ես հրեշտակաց ընկերակից եմ գը-
րուած , իմ ժառանգութիւնս եր-
կինքն է : Տուր ինծի Աստուած իմ ,
որ միշտ հոն ըլլայ փափաքս : —
Տուր ինծի շնորհք որ ատենս պա-
րապ չանցընեմ , հապա զգուշու-
թեամբ երթամ ան ձամբան որ
դէպ 'ի յաւիտենականութիւն կը
տանի : (Օգնէ ինծի ու թեթեցուր
կենացս բեռը , ինչուան որ հասնիմ
ան վայրկենին՝ որ աշխատութիւնս
դադրի ու անվախճան հանգիստս
սկսի . ինչուան որ մանեմքու խա-
ղաղական և ուրախաւէտ յաւիտե-
նական արքայութիւնդ . Ամէն , :